ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА

Երկրաբանություն և աշխարհագրություն 3, 2014 *Геология и география*

Աշխարհագրություն

УДК 502.45 (470.26)

ԻՐԱՆԻ ԳՈԼԵՍՏԱՆԻ ՄԱՐԶԻ ԷԿՈՏՈՒՐԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

ԷՍՄԱՅԻԼ ՄՈՀԱՋԵՐ*

ԵՊՀ սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոն, Հայաստան

Գոլեստանի մարզը մեծ ներուժ ունի էկոտուրիզմի զարգացման համար: Այդ ներուժի օգտագործումը գտնվում է ցածր մակարդակի վրա: Խնդրի լուծման համար անհրաժեշտ է ունենալ էկոտուրիզմի զարգացման ռազմավարություն:

Հոդվածում ձեռք բերված արդյունքները կարող են հիմք հանդիսանալ զբոսաշրջության ռազմավարական ծրագրերի մշակման համար, որոնց հիմքում տարածքի բնառեսուրսային ներուժի, հասարակության կարողությունների համալիրային օգտագործումն է, հաշվի առնելով ներկայի և ապագայի շահերը:

***Keywords*:** ecotourism development strategy, nature potential, Golestan State National Parks.

Իրանի Գոլեստանի մարզը լավ պայմաններ ունի տուրիզմի և, մասնավորապես, էկոտուրիզմի զարգացման համար, ինչը կարող է նպաստել նոր կապիտալի հոսքը դեպի մարզ, կմեծացնի բնակչության զբաղվածությունը, կբարելավի միջավայրի էկոլոգիական վիճակը, կնպաստի տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացմանը:

Այժմ, թե՛ տուրիզմը, թե՛ էկոտուրիզմը Գոլեստանում թույլ են զարգացած, պատճառն եղած հնարավորությունների օգտագործման ցածր մակարդակն է: Խնդրի լուծման համար անհրաժեշտ է գտնել դրանց զարգացման նախադրյալների գնահատականը, առաջարկել օգտագործման նպատակային ձևերը:

Տուրիզմը ներկայիս հասարակական կյանքի անբաժանելի մասն է, աշխատանքային լարվածությունից հետո լիցքաթափվելու լավագույն միջոցներից է. այն ուղևորություն է դեպի բնություն, դեպի կատարյալը, անդորրը, փնտրելով այնտեղ հոգեկան խաղաղություն:

Տուրիստական ինդուստրիայի զարգացումն իր հետ բերում է մի շարք բացասական երևույթներ: Մարդու միջամտության պատճառով փոխվում են բնական միջավայրի բաղադրիչները, խաթարվում է միջավայրի ներդաշնակությունը, նվազում է մարդու կողմից կատարյալը տեսնելու հնարավորությունը:

Խնդիրը մնում է մշակել և ներդնել մարդ–բնություն փոխհարաբերության նպատակային ձևերը: “Մեր ժամանակների գերխնդիրն անհատի և հարազատ միջավայրի փոխհարաբերության կարգավորումն է” [1]:

* E-mail: aavagyan@ysu.am

Էկոտուրիզմը՝ ծանոթությունն է բնության հետ չխախտելով նրա էկոլոգիական հաշվեկշիռը:

Էկոտուրիզմը տուրիզմի մի տեսակ է, որի ժամանակ կատարվում են շրջապատի կեցության պահպանման ուղղությամբ նախատեսված էքսկուրսիաներ դեպի բնական միջավայր [2]:

Բնության ներդաշնակությունը չխախտելու համար անհրաժեշտ է մարդ–բնություն փոխհարաբերությունը հասցնել համապատասխան մակարդակի, բացահայտել այդ փոխհարաբերությունների նպատակային ձևերի գիտական մեխանիզմը՝ բոլոր հաշվարկների մեջ հաշվի առնելով տվյալ տարածքում տուրիզմից առաջացած էկոլոգիական խնդիրները: Այստեղ մի կողմից բնական միջավայրի խելացի օգտագործումն է, իսկ մյուս կողմից էկոլոգիապես խախտված միջավայրի վերականգնումն է:

Էկոտուրիզմը ճանապարհ է դեպի բնություն, բնականի և բանականի ներդաշնակությունն, մարդու հոգեկան աշխարհի վերականգնում, բնության երևույթների մասին գիտելիքների ավելացում:

Էկոտուրիզմը բնական ռեսուրսների պահպանման կայուն զարգացման միջոց է [3]: Էկոտուրիզմը միմյանց է միացնում մարդու գործունեությունը և բնական միջավայրը:

Մարդու գործունեությունը նպատակաուղղված է բավարարելու իր պահանջմունքները: Սակայն զբոսաշրջության արագ զարգացումը բացասական հետևանքներ է թողնում և զբոսաշրջության տնտեսական շահերը ուղեկցվում են կեցության միջավայրի բազմաթիվ վնասներով:

Մարդը կրում է միջավայրի պահպանման պատասխանատվությունը, սա ևս էկոտուրիզմի զարգացման պատճառներից մեկն է [4]:

Էկոտուրիզմը նաև տուրիստական տնտեսության զարգացման միջոց է: Իրանի տուրիստական տնտեսությունը տարեկան բերում է 850 մլն դոլարի եկամուտ, որը շատ փոքր ցուցանիշ է ունեցած ներուժի համեմատությամբ: Գլխավոր խնդիրը մնում է եղած հնարավորությունները ճիշտ գնահատել, բացահայտել դրանց օգտագործման գիտականորեն հիմնավորված ուղիները: Այն իրագործելու համար անհրաժեշտ է բացահայտել.

- էկոտուրիզմի կարողությունները, տալ այդ կարողությունների օգտագործմանը խանգարող երևույթի գնահատականը, գիտականորեն հիմնավորել և առաջարկել խանգարող երևույթների վերացման միջոցները, ուղիները, ձևերը;
- Գոլեստանի նահանգի էկոտուրիզմի զարգացման հիմնական նախադրյալները առաջին հերթին բնական տեսարժան վայրերն են՝ ձկնաշխարհով հարուստ ծովը, ծոցերը, լճերը, գետերը, ջրվեժները, լեռները, անտառները:

Գոլեստանի ծովափնյա գիծը 100 *կմ* է: Ավազապատ լողափերը, տաք ջուրը լավագույն պայմաններ են էկոտուրիզմի զարգացման համար:

Գորգանի ծոցը՝ Կասպից ծովի մասն է, կապված է նրա հետ փոքր նեղուցով և հաղորդակցությունը ծովի հետ մեծ չէ, ինչի շնորհիվ ծոցում առաջացել է յուրահատուկ կենդանական և բուսական աշխարհ: Գորգանի ծոցը թափվում են 10-ից ավելի գետեր, որոնք իրենց հետ բերում են մեծ քանակությամբ օրգանական նյութեր, առատ կերով ապահովելով ձկնաշխարհը:

Այստեղից ոչ հեռու գտնվում է Գոմշանի ծոցը (լիճը): Այն գրավում է 14 հազ. *հա* տարածք: Նրա մակերևույթն ունի ընդարձակվելու միտում կապված Կասպից ծովի մակարդակի բարձրացման հետ: Ծոցը հարուստ է ձկնաշխարհով:

Երկու ծոցերն էլ չվող թռչունների կարևոր հանգրվաններ են:

Էկոտուրիզմի զարգացման լավ պայմաններ կան նաև Ալագոլ, Աշիգոլ, Ալմագոլ, Գոմիշանի, Գոլաֆշանի լճերում:

Գոլեստանի լեռնային գետերն իրենց գեղատեսիլ հովիտներով, ջրվեժներով (Լուվեի, Քաբուդվալի, Ծիրաբաղի, Աղսուի) ու սահանքներով գրավիչ են բնության սիրահարների համար:

Էկոտուրիզմի զարգացման համար կարևոր է անտառների դերը: Գոլեստանի բնական անտառները գրավում են 370 հազ *հա* տարածք, բացի դրանից կան 50 հազ *հա* նորատունկ անտառներ: Բնական անտառների 66% ունեն արդյունաբերական, 18% բնապահպանական նշանակություն:

Անտառածածկի առավել կարևոր տեղամասերից են Գոլեստանի ազգային պարկը, որը գրավում է 91 հազ *հա* տարածք: Այն ունի հարուստ բուսական և կենդանական աշխարհ, յուրահատուկ աշխարհագրական դիրք, բարենպաստ առողջարար կլիմայական պայմաններ, շատ են ջրվեժները:

Նահանգի Ջահան-Նումայի արգելավայրը գրավում է 30,6 հազ *հա* տարածք: Այն հարուստ է տարբեր տեսակի բույսերով, կենդանիներով, ջրվեժներով, աղբյուրներով և պատմամշակութային արժեքներով և կարող է դառնալ էկոտուրիզմի խոշոր կենտրոն:

Ազիզ Աբադի արգելավայրը գրավում է 2000 *հա* տարածք: Այս արգելավայրի մի մասն արհեստական անտառներ են:

Ալի-Աբադի բարձունքում են գտնվում Փունե Արամ և Թղկու անտառային արգելավայրերը, 100 *հա* ընդհանուր տարածքով: Այստեղ պահպանվել են փշատերև ծառատեսակները, որոնցից առանձնակի նշանակություն ունի կարմրածառը:

Էկոտուրիզմի նպատակներով կարող են օգտագործվել նաև Սուրքել, Ջարբին, Ջարին գոլ, Շեմշադ, Ջեմշե-Բոլբալ, Վայրի Պիստակենու արգելաիվայրերը:

Էկոտուրիզմի զարգացման հեռանկար կարող են ծառայել Ալանգ դարե (174 *հա*) և Ղորղի (650 *հա* տարածքով) անտառային այգիները:

Իրանի լեռներում կան լավ պայմաններ լեռնագնացության զարգացման համար: Առանձնակի գրավիչ են քարայրները՝ Ալբորզի լեռներում գտնվող Քիրմանի քարայրը, որը դեռևս 100 հազ տարի առաջ եղել է հինգ բնակավայր (բնակարան):

Էկոտուրիզմի զարգացմանը նպաստում է նաև բավարար մակարդակի ենթակառուցվածքը՝ Բանդար գազ, Բանդար Թորքման նավահանգիստները, լեռնագնացության համար ստեղծված ճանապարհները, բնակչության բազմաբնույթ էթնիկական կառուցվածքը:

Նույնիսկ այս բարենպաստ պայմանների առկայությամբ Գոլեստանում էկոտուրիզմն անհրաժեշտ զարգացում չի ապրում, որի պատճառներն են.

- տուրիզմը կազմակերպող բարձրորակ կադրերի պակասը;
- էկոտուրիզմի տնտեսության զարգացումն ապահովող օրենքների անկատարությունը;
- բժշկական, սանիտարական ծառայությունների ցածր մակարդակը; կացարանների պակասը:

Խնդրի լուծման ուղին գտնելու համար մեկ ընդհանրության են բերվել Գոլեստանի էկոտուրիզմի զարգացման բաղադրիչները, կատարվել դասակարգում, այնուհետև տրվել յուրաքանչյուր բաղադրիչի տեղն այդ համակարգում:

Էկոտուրիզմի բաղադրիչները գնահատվել են երկու սկզբունքով՝ առաջինի դեպքում բաղադրիչները (նախադրյալները) գնահատվել են՝ ըստ իրենց կարևորության դրական ազդեցության, երկրորդի դեպքում՝ ըստ իրենց բացասական ազդեցության:

Յուրաքանչյուր խմբի նախադրյալների ընդհանուր արժեքը 100% է, որն իր հերթին բաժանվում է 5 մասի: Ամեն մի մասն ունի իր կարևորությունը՝ շատ քիչ,

քիչ, միջին, մեծ, շատ մեծ: Ստացած տոկոսը որոշում է տվյալ խմբի տեղը ընդհանուր համակարգում:

Աղյուսակ 1

Գոլեստանի մարզի էկոտուրիզմի զարգացման դրական նախադրյալների գնահատականը

Նախադրյալները	Կարևորությունը, %				
	շատ քիչ	քիչ	միջին	մեծ	շատ մեծ
Լովե, Բաբուովալ, Շիրաբադ, Աղսու ջրվեժները, Դերազնոյ բարձրությունը, Ջանան Նամա, Գոլեստան այգիները	2,4	1,8	7,2,	36,5	52,1
Գորգանի, Թորքմանի, Սահարայի դաշտերը, Ալագոլ, Աշիգոլ, Ալմագոլ, Գոմիշան լճերը	0,6	6,6	25,1	38,3	28,7
լեռնագնացության համար հարմար ենթակառուցվածքները	2,4	15,6	39,5	28,1	19,4
հանգստավայրերը, Գազի և Թորքմանի լողափերը	0,6	2,4	17,4	37,7	41,3
կապիտալի ներդրման համար ստեղծված նախադրյալներ՝ հյուրանոցներ, սեփական տներ	6,6	0,24	30,5	0,21	17,4
տեղական ղեկավարների հակվածությունն էկոտուրիզմի միջոցով աշխատատեղերի ստեղծման համար	14,4	22,4	28,1	19,8,	0,15
բնակչության ցանկությունները և հոգեբանական պատրաստ-վածությունը զբոսաշրջության զարգացման համար	7,4	0,15	34,1	23,4	17,4
Անաղմուկ, խաղաղ, հանգիստ միջավայր ունենալը	7,2	9,6	29,9	31,7	21,6
մեղմ կլիմայի առկայությունը	0,6	4,2	13,2	40,1	40,1
Գորգանի ծոցի Գազ և Թորքաման նավահանգիստների, էկոտուրիզմի զարգացման առումով	0,6	8,4	31,7	26,3	30,5
տեղաբնիկների բազմազանությունը՝ թուրքմեններ, սիստանցիներ, թուրքեր	13,2	13,8	26,9	28,1	17,4
այցելության համար յուրահատուկ վայրերը՝ Գոլեստանի ազգային պարկ, Ջահան նամայի պահպանվող տարածք	1,8	1,8	24,6	37,7,	31,7
բարենպաստ տրանսպորտային ենթակառուցվածքները, երկաթուղին, ավտոճանապարհները, օդանավակայանը	6,6	8,4	26,9	28,1	29,3
Թուրքմենական և իրանական բանուկ սահմանը	4,2	0,15	35,9	26,9	19,8
լեռնային շրջանները՝ Շահվարի, Մարալի և Աբարի լեռներ	0,6	0,6	27,5	35,9	,28,1
Գոլեստանի 100 *կմ* երկարությամբ ծովափը	1,2	7,2	26,9	32,9	31,7
տաք, բուժիչ հանքային աղբյուրներ՝ Գորգանում և Ջիարաթում	2,4	11,4	21,6	33,5	31,1

Ստացված արդյունքները ցույց են տալիս, որ Գոլեստանում էկոտուրիզմի զարգացման առավել կարևոր դեր կարող են կատարել Լովե, Բաբուովալ, Շիրաբադ, Աղսու ջրվեժները, Դերազնոյ բարձրությունը, Ջանան-Նամա և Գոլեստանի այգիները, բարենպաստ կլիմայական պայմանները, Գազի և Թորքմանի լողափերը: Այս գործոնները գնահատման ընդհանուր համակարգում ունեն 40,1 և ավել միավոր: Երկրորդ խմբի մեջ մտնում են 30–40 միավոր ստացած Գորգանի ծոցը, տաք բուժիչ հանքային ջրերը, անտառները և այլն:

Հենց այդ ներուժի վրա էլ անհրաժեշտ է մշակել տուրիզմի զարգացման ռազմավարությունը:

Երկրորդ աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ Գոլեստանում էկոտուրիզմի զարգացմանը նպաստող դրական նախադրյալների օգտագործ-մանը կարող են խոչընդոտել. տուրիզմի մասնագետների, պետության հովանա-վորչությանն անհրաժեշտ ենթակառուցվածքների պակասը, տեղաբնիկների մոտ տուրիզմի մշակույթի ցածր մակարդակը և այլն:

Աղյուսակ 2

Գոլեստանի մարզի էկոտուրիզմի զարգացման բացասական նախադրյալների գնահատականը

Նախադրյալները	Բացասական ազդեցությունը, %				
	շատ քիչ	քիչ	միջին	մեծ	շատ մեծ
ջրվեժների, լեռների, դաշտերի շրջանում կապի միջոցների ցածր մակարդակը	4,2	0,18	19,8	32,9	25,1
առողջապահական և սպասարկման ոլորտի անբավարար մակարդակը	5,4	7,2	17,4	37,7	31,7
տեղաբնակների դժգոհություններն էկոտուրիզմի և ընդհանրապես տուրիզմի ֆինանսավորման վիճակի հանդեպ	4,2	16,8	32,9	27,5	16,8
էկոտուրիզմի ոլորտի կազմակերպիչների թուլությունը	4,2	9,6	0,18	39,5	28,1
սպորտային և հանգստյան միջոցառումների կազմակերպման հնարավորությունների պակասը	0,6	6,6	22,8	34,7	29,3
տարածքի բնակչության անկազմակերպվածությունը	0,6	0,21	44,3	18,6	7,8
ջրոսաշրջության կացարանների պակասությունը	3,6,	6,6	19,2	40,1	29,3
բնակչության մեջ տուրիզմի մշակույթի պակասը	10,2	18,6	33,5	18,6	15,6
տուրիզմի մասնագետների պակասը	6,6	10,8	24,6	36,5	20,4
հասարակական մթնոլորտի անբավարար վիճակը	12,6	34,1	26,9	15,6	9,6
պետության կողմից հովանավորչության պակասը	5,4	7,8	28,1	32,3	25,1

Խնդրի լուծման համար անհրաժեշտ է համալիրային մոտեցում. էկոտուրիզմի զարգացմանը նպաստող և խանգարող բոլոր գործոնները բերել մեկ ընդհանուր դաշտ, ինչպես արված է առաջին և երկրորդ աղյուսակներում:

Ստացված արդյունքների հիման վրա մշակել էկոտուրիզմի ռեգիոնալ զարգացման ռազմավարություն:

Ստացվել է 16.07.2014

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Душков В.А.** География и психология. М., 2006.
2. **Զոմրոդյան Մոհամադ-Զաֆար** Իրանի գեոմորֆոլոգիական “Ներքին դինամիկան և շինարարական պրոցեսները”: Մաշհադ: Ֆերդուսու համալսարան, 2006:
3. **Փայելի Յազդի, Մոհամադ Հոսեյն** Մեյդի Սաշայի Զբոսաշրջության իմաստը և էությունը: Թեհրան: Երկրորդ Սեմար հրատարակչություն, 2007 (պարսկերեն):
4. **Mathison A., Wall S.** Tourism: Economies Physical and Social Impacts. London: Longmen, 1982.

ЭСМАИЛ МОАДЖЕР

ОЦЕНКА ПРЕДПОСЫЛОК РАЗВИТИЯ ЭКОТУРИЗМА В ГОЛЕСТАНСКОЙ ОБЛАСТИ ИРАНА

Резюме

Область Голестан имеет огромный потенциал для развития экотуризма. Использование этого потенциала осуществляется на низком уровне. Для решения данной проблемы необходимо разработать стратегию развития экотуризма.

Отображенные в статье результаты могут служить основой для создания стратегических туристических программ, которые должны включать комплексное использование туристических возможностей, основываясь на интересах нынешних и будущих поколений.

ESMAIL MOAJER

ESTIMATION OF GOLESTAN REGION ECOTOURISM DEVELOPMENT PRECONDITIONS

Summary

Golestan Region has a big potential for ecotourism development. Nowadays the usage of this potential is not on a sufficient level. For solving this problem there must be a strategy. The results of their research can serve as a framework for creating a strategy of ecotourism development. This strategy will be based on the usage of natural potential of the territory. At the same time, the strategy will include the complex usage of society capacity based on present and future interests.